





ՌՈՒԲԻՆԵԱՆ ՍԱՆՈՒՑ ՄԱՏԵՆԱՇԱՐ

ԹԻԻ 1

Ֆ Է Ն Է Ս Է Ի
❖ ՅՈՒՇԱՄԱՏԵԱՆ



Հրատարակիչ՝

ԱՔԻԿ ԳԱԼՖԱՆՈՆ.

(Ա. Շինարարեղ)

Աշխատակիցներ՝

ՆԵՐՍԷՍ ՆԵՐՍԷՍՅԱՆ

ՏԻԹ-ԲՈՂԹ

ԱԼԷԳՍԱՆ ԳՐԻԳՈՐԻԱՆ

ՆԻԼ ԵՐԵՐ

ՏԻԹՐՈՑԻԹ



1935

ՋՈՆԵՐԿ ԽՈՒՐԻՆԵԱՆԻՆ

Յէ՛լ Կրէ՛ի Ռուբինեան՝ մը միռութիւն պաշտելի,
 Ջոնեցիբ գոն վարժարան՝ երկսեռ զաւկացդ հայրենի
 Մարտիցի կաթ գիտունթեան՝ ասու՛մ Հայկեան ցանկալի,
 Կերակցի տաք վառարան բիւթ չիշատակներով լի:

Ի՞նչէ՛ր էկ մեծ քաղաքին խնք ըրիր, գաբն հանցնելու
 Անուք մեր գիւղն վաղեմի՝ սուրբ նախանձով մրցելու,
 Խի՛նց աւեր լիուլի՝ մեծ արգիւնքով պսակելու
 Սուրբ Թորոսին, գպրոցին փառքն ու պարծպնքն հիւսելու:

Մտի՛ւ պահ մը դռնն ետիդ՝ ա՛յ յսկամեաց Ռուբինեան,
 Քուրքն ապիթատ գեհննի կործաներ է փմէն բան;
 Եղի՛նք կեանքդ մեր եկրին թառամեք է արկենդան,
 Անք են գացեր մեր մտքի վառ աստղերը կենձարած:

Ի՛նչո՛ւսն մեր շաւոր խմբու գէմքով նստեր է,
 Ի տես շուրջին ամառի անբայացած դաշտեթէն՝
 Եւ խորերէն իւր սրտի անէ՛ք, նզո՛ւվք կարդալէն
 Պատե՛րուեր՝ միւն սաւանի՝ նշոն սգոյ և ի քէն:

Սարէ՛ ցնցուէ՛ մեծերինեան, թղթափէ քուն ծերութեան,
 Երէ՛ս խառն կղական մեր տիրելաց որք ինկան
 Տէր՝ Զորն և ՚ի կախաղան՝ թէ՛ յետ աշուռ որք ողջ կան,
 Վրէ՛՛ն Լուծեն հայութեան ինկելով նոր մի քաղաք:

Ի՛նչո՛ւսն է մեզ համար Ֆէնէսէցիներ համայն
 Մէկ տիրտ մէկ հոգի կղած նորոգենք մեր Ռուբինեան,
 Որք և անաէր մեր Նոքարք խմբենք ՚ի մէջն Հայաստան
 Երկնելով հոն Ֆէնէսիւն՝ վերապրինք կեանք մ՝ անասան:
 Տի՛թրոյի՛

ԱՅԻԿ ԳԱԼՅԱՆԱՆ

Յ Ա Ռ Ա Ջ Ա Ր Ա Ն

Թողնելով մեր ծննդավայրը, և թափառական ցան ու ցրիւ եղած, վերադարձի յոյսը յաւէտ կորուսած: Արգեղոսի ստորստին փռուած երբեմնի Ֆէնէսէէն այժմ միայն մնացած է պատկերացումը մեր մտքին մէջ տեղւոյն, սովորութիւններուն, բարքին, և լեզուին քաղցր յիշատակը միայն:

Շատ յաճախ հաւաքոյթներու, ընտանեկան երեկոյթներու մէջ անցեալին պատահած երբեմնի դէպքերը, անէքթօտները, մեծ հաճոյքով կը պատմենք, կը լսենք, և փոխադարձ յիշատակներով, կ'ապրինք պահ մը գէթ այն օրերը, որ բոլորիս կեանքին ամենահաճոյալից մասը կը կազմեն:

Չօնելով այս գեղոյ կը Ռուբինեանի, համարձակութիւնը կուենեանք տպագրելով մասնաւորապէս մեր լեզուի բառառը կը յուսանք որ ընթերցող հայրենակիցներու ծառայութիւն մը մատուցած կըլլանք, որոնք առանց յետին մտքերու պիտի քաջալերեն մեր ձեռնարկը:

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ





ՀԱՅԿԱՅԻՆ ԳԵՂԱՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ



37631-67

“ԵԱՓՐՈՒԹՅՈՒՆ”

Գրեց՝ ԱԼԷՔՍԱՆ ԳՐԻԴՈՐԵԱՆ

ՆԻԱ-ԵՕՐՔ

Շատեր կը յիշեն երկրի տանիքները, ուր աղաքներ սովորութիւն ունէին բարձրանալու կամ «կէօվէրճին» քարկոծելու, և կամ «վէգ» խաղալու համար: Զէք մոռցած նաև որ երբեմնի կտուրներու վրայ կը դառնէր պատուհան մը խաչանձև երկաթով մը տմրացած, որին կափարիչը ձմեռը միայն կը դարձնէր: Անգամ մը չարածճի դիտումով մը, երբ քանի մը հոգիով մօտեցանք պատուհանէն ձանկ մը դուռ և քարեր վար ձգելով բարկացնելու Մագիտ Տուտուն, որ «ուրում լահոտներին» էսոնք կինէն պոռալով մեզ կուտուրէ կուտուր կը հալածէր, լսեցինք որ քթին տակէն մոխրաւունքէն կը մեհախօսէր ըսելով. — «Վայ կիտի կիւնէր վայ, վախաօքը մենք է ըսողպարլու, ինտանի զաթէր անցած հէգի էրինք դահար, բրահմէթլիկին սաղլըզնտա՝ ամմէն մարդ տիրէմ տիրէմ խաթիրիս կառնէր, էկու տեղ քի, կէս նուկի թահին վէրէսի կինկլու համա, էրկու տապու տխճէլ կացը: Ասված ուրէր կանէ տիւշմանիս տեսածէն էս չի թողնու: Ուրբ առաւելունա էլ, նէֆէսիդ քէօրլէթմիշ չերած հապըռէ տառճըր տէվէլ տաղըն, քէլթէթէղը, կէօլէմէնը: Ինչ է. ամմէնը էրկու կապ եւվշան իլէն, քանի մը քէօք եալանդու, քիշ մը վառլընք, քանի մը շարոցէ ետիրաի փէյտայէլու: Զգալով իր յոգնութիւնը, վախ ինձիկներիս, էօքճէներիսէ չաթուտէր հէօտլում էղեր է, թընտալու տէրմանիս չէ միացեր է, ախ դատասընալտըղըմ պուլուգներիսէ չինաննէ խէվեալու տէրտէր ունիմ ամմա, վաղը իշալլահ էնոնք մէյտան կեւլենըք, տիւշմաններուս կիւլիւնճ չեմ ընամ: Էն չէ եա ուր միացըն ըտը տօմարցի էմմիները, վարդ ուկ աղըն խաղար

57358-Ա-Կ

ձեռքի, խայքըլուէն եւ փրօխներուն աղօր միւշտէրի մը ու-
քերքը ըսը, մէջկիս օղորթէր, զերա՞ղաթըրինիս ինչու մօր
կէլէկէլէ կօքտէ, քիչ մը արդար եզ իլէն, թօխատ եազմա
մը կուղեմ :

Եւ գուլայ մը բուրդ փաթթած մէջքին իր չոր մատ-
ներով կը դարձնէր քարմանը, կարծես իր տէրտին տէրմանը
փնտռել փորձելով այդ դարձուածքին մէջ, ձմեռը մօտ էր
պէտք էր «պուլուզներուն» համար պուրդէ չօրսպ պատ-
րաստել, «թօթին կալօչ» գնելու կարողութիւն չունէր, որով-
հետեւ այրի էր, վաստակէ ղուրկ :

Իր զաւակներուն համեմատ «տուտուն» էր, երկրորդ
անգամ չամուսնացաւ որովհետեւ չուզեց որ իր զաւակները
«թայ կէլտին կոչուէին : Մնաց որ ունեցած թանտրը շուլուն,
քիլիմը շափութէ շուլը և խալըն շատ տարիներ կը դիմա-
նային, կէպիւտ թանոց և տիզլիկը այն տարին կը հանէր,
չորմիս-իրիշկիկը, ուռուպը, թուրշին, թարխանան, պուլ-
ղուրը մինչև Մենծ Պաշք կօքտէր, միայն արդար եղը և
թօխատ եազման կը պակսէր :

Կը լսենք դռան վրայ կոչու հարուածներու ձայներ, և
— «Տըտու, տըտու, եափրուխ կօ՞ւ» Ու մաքիթ կէլին «մէղա
հէլպէթ» ըսելով սէտիրին քէնարը պաղտաշ նստած տեղէն
ցաակեց դուռը բանալու :

Երկու թօմարցի էմմիններ, արևէն ղեցած, գլուխին
ֆէս մը ճուրտակի պէս. ներքէն կերևին քէշէ քիւլահներու
ծայրերը և շալմաներ տնփութօրէն փաթթուած, հագած
են շալէ զպուն, և պէզէ շապիկներ, թօմարդայի տօխումա
շալվար, և մոռ գօտի (ղայրէթ ղուլաղը), որուն մէկ ծայ-
րէն մախաթ և ապանօզ աղզլէիւր կերևին, և ծայրը պիզով
երկու մէսէսներ : Կը լսեն ներս և շարուխներուն սրըմները
կը թուլցնեն :

— Ուֆ էս իշ տէվիր մահլէստան է լա, Մազիտ տըտու
տի՞ն էս կ'ըսէ Սրապիոն աղա իր կարմիր ալլէխով քրտինքը
սրբելով :

— Տէվր չէ լա կը պատասխանէ Սիմաւոն աղան Վէր-
թիւկը հոսա սօլախ տուաւ. և խօսքը ուղղելով Մազիտ տու
տունին հիշօց է ետփրուիւր լա տըտու, կէօրփէ է մը եօղսա
զարթ: Մազիտ տուտու նեղուած այս անօրինակ հարցումէն,
հայօղորմած ծուլուկ կիպի թաղէ է ետփրախիս, իւք աղր-
զըն շարած իմ, մէղս տունիս համա հավաս հավաս իլլէ
ցուցըյրք, հիմմէկէ ոլըտը ծախեմ, ինչ զատար պատնէ պատ
սալաունէ մէկ թրն կէտիկ կամբնա: Եւ յիշելով որ թոնի-
րին վրայ վարպէտէն դալիք պաւլուղներուն համար տպուր
կեփէր. «Յիմունն . . . պուտուկին օտքը իսկեց, պուտաց դա-
հանտելով և ներս վազեց:

Սիմաւոն ե Սրապիօն այս ղէպքը տնէկատ թողուցին-
աչքերին յառած մաւր վար առնելու անէկներուն վրայ շար-
ուած ետփրախներուն որ խեղճերուն հաւատքին մէկ մասը
կը կազմէր, այսքան տատա գտնուէր այս տան մէջ:

— Լա Սիմաւոն թաղաւորը իշ կուտէ:

— Եռուպ իլէն սոխի ծլուկ:

— Տէվրէ է տէվրէ, ետփրուխ, ետփրուխ, էվէ ետփ-
րուխ: Շաշուուն էվէրէկցիները խաղողը կիտտէլէն ոտըրա ետփ-
րուխը էգիստանը կը ձգեն կերթօն: Սիմաւոն ի տես կնոջ
թոնրատունը մանելուն — իշ օսմանլու կընըկ է լա, հէմսէ
ետփրուխի թիւճմար, կատէհուս մալը, կատէհուս թօփուխ-
ները, դատէկիդ ըլլամ ետրատան:

Մինչ Սրապիօն զեռ աչքը յառած ետփրուխ շարոցնե-
րուն:

— Օճախդ չի մարի աչկին.

— Էմմի անըթըյիքնէ էրկու գգալ ուլլում կէրէք, ներս
կը մտնէ Մաքիթ տուտուն անքը պնակով դգալ մը բռնած:

— Տըտու պալ ըլլայ էշկիս չէ! Հա ետփրուխ ըլլար իսէ
թիքի մը կառնէի: Ոսքը փոխելով օճախիդ մօռի կընըկ,
էգիստանը տունիդ մը կընցիր: Քէնի բարօ է կօպը:

— (Մաքիթ տուտուն չի հասկնալով վերջին խօսքը) ինչ
ըսեր, ինչ ըսեր :

— Եւրոպայի տիւղիւմը քէնի բարօ է :

— Օղորթը խօսըմէն պաշտօնը ին 6 կապը 10 բարայէն
կածախեմ ամամ, ծէղիկի համա 7 կապէն համբամ :

— Իշ կասես լա կընրկ օճախըն պըտը մարես :

— Իշ կասես լա կընրկ թիւթեա կաճախես, էս քէօքը
չօրնալուճա եւրոպայը մենք նո՞ր կատես հունք :

— Իշ տէ ինտէս զարտաշիմ. էյէր տիւղիւմը հինգ բա-
րայէն տէրիմնէ, եաղմա կէրթէր հէյեցէք տեսէք, չըխարհուղ
կուգանէ առէք, չէնէ ծեր բարան ծոցերնիւ, իմ մալիս իմ
խէշիս :

— Հայտէ պրէ տըտու մալէդ կաքկօ, իշ կաթորթ իրաս
քիշ մը ֆիյէթը կիթայէք առնուք, փարէն քիւք դըսմէթիթ
էղէրէ, Վէրդիւկը իմ չօրպանիս է հէյպէյօն էսպիւր պէրած
էի, տալտըրը տալտըրը էօլչէցի, Ասվոծածնայ վանքը իւխար
ուգանէ տօղրու մեր տիւնը քչէ էշը, հարմաններուն խէշը
չօրպէնուն մալէէն, ասվէր օղլու թաքէսին տիւնին քովը,
կէլկէլ օղլու սրապիօն տէյի հարցուր պարմօլս զատօրը կիտէ :

— Էդ հէլ չինալոց պան մէր ամամ, զաթը Վարդուկ
աղըն անունը տուվըր, հատէ սեթը կապը քառսուն բարայէն
հարմեմ. ամամ թիյացէն էրկիրի չըստէք, տուքէ աղօր առ-
պուր մը եախուա էփուն օռալ մը պէրէքնէ հոս, մէկ տապու
կլօխ քչտեցէք, հատէ տեսնում քանի ղուրուշի կակուղէքնէ
հարմեմ քի, էս տահա պանիս պանած չեմ, պուլուղներին
հիմմէկ վարպետէն կուգան :

— Հատէ էտէթ թըլլայ, պատասխանեցին երկուքը
միատեղ : Սրապիօն աղա դոդդոդացող մատներով փնտռեց
դրամը քէսէին զայթանէ կապը քակեց, պարապ էր, զայ-
րէթ ղուլտղըն նայեցաւ պարապ էր, յիշեց որ չալմային
ծայրը կտպած էր, քակեց ակռաներով դնորնը պաղտալ նըս-

տած սկսաւ գիւղին սմարընները խորհիլ, խոյ Սիմաւոն մէ-
տէսին կրթնած յոգնած ըլլալով քնանալ շորձեց:

— Էերկու զուրիշ քէլ Գիրգորին համօ դառաւ պէզ պօ-
յասը, զտո կր դնէ գրամբ, իրեք մէթէլիկ Շօռօմսիմէին
համօ զէյթին եռղը իյէ սուրուր, Մէնիւկին համօ ճիղարի
թիւղթ, թօփ մը մարօշ, նուկի մը քէլլէ շէքէրի, չօրպածուն
կնրկր իշ կուղէք Բ. Բ. Բ. պիթ օթու իյէ էլթիւն թօզու, ու-
նէմէքի, խոշոր դրամ մալ մէկ կողմ կր դնէ և զաշանդած,
լա Սիմաւոն ճէնիկին քիթաւը իլէն աէստէ մը երլանլը քիպ-
րիթի բարօն պահսեց, ետ սուրբ Ասվածածին, և սկսեց խենդի
պէս գրպանները փնտռել, ւտըտու քէսէն էլլէհէմ տիւնը աճար
ղըպունին ճէպր մեաց, և մխտելով Սիմաւոնին որ ոտքի ելլէ,
էթիուհ իշ խալթ էրինքտէ մօռցանք:

Սիմաւոն աղանոր դիւտ մը բրածի պէս. Տըտու, տիւն
մեկի համօ իւթը կապ վրէ՛, Զիւր բիւնկիւրէ խմխեցուր, էս
էրթամ, վէրթ իւկէն քառսուն բարօ առնեմ դամ, հա պաղար-
լըն մը թըլլա իմ առիէն իշլէկ է, թէզ կը ծախեն: Մագիտ
տուտուն այս տնօրինակ դէպքին չի կարենալով հանդուրժել
տօմարցի էմմիներուն պէշիրիկսիզութեան կատղած ետխա-
ներնուն բռնելով:

— Զի հասնէր չի հասըրիէրիք ուգալուլըք, կէլմէզին
տիւլը ընէրիք, կէտիննասնէր էմմի վիրէվնիդ, կըզ կըզ կըզ
էրկու սաշաթ պանէս կօրծէս էրիք, հանք շարվիք տուքէ
զըպունիտէ, էլէք տեսնում, տուրս, էլ հա, էլ հա, էլ հա,
ընծը Մաքիթ կէլին կըսեն, էս ծեր ինճիկները կր խրուեմ,
և ներս վազելով շերեփր ձեռքը վերադարձաւ, բայց խեղճ
էմմինները շողոցէն դարվեր անհետացած էին վախերնէն
շարուխի թէք մը և մէսէս մը ձգելով, և մենք անկուշտօրէն
խնդալով կուտուրին պատէն դար վար քարերը կը նետէինք
էմմիներուն ետէն ետէն առհա պօռալով:



ԿԸ ՅԵՇԷ Ք

ԿԸ յԻՀ ԷՔ

Հաւաքեց՝ ՆԵՐՍԷՍ ՆԵՐՍԷՍԵԱՆ,

Սանտի մէջ ասպուր ծեծեւնիս . պազուկէ թօփ շինելնիս .
ինչու Առաճա երթալնիս ժամուն բակը մատաղ ուտելնիս .
Ծննտին աւետիս ըսելնիս Ջատկին կարմիր եմէնի հագնելնիս :

Պահք-կատու կախելնիս . հատիկ խաշելնիս .

պուլղուր չինրելնիս , էրկանքով աղաւնիս .

պէլէմիւրով բէրխունի շինելնիս , ախր սէքիսին նոտելնիս ,
Ծրբեմն խումունի ընելնիս , կեղարը հէմէնի կախելնիս
պուլղուրը ըրէչէլ դռնելնիս , տէրինտէգին ինչ ընելնիս
չամըչ լապլապու բաժնելնիս , կրակ վառելով ցատքելնիս :

Կուտուրը ուղուս պռնուելնիս , շողանով լաթ լսաւնիս ,

խաշին լեռը կրակ վառելնիս , պոմպէլի մաղ շտկելնիս .

ուռուպատիկ կարվելնիս , քարթվիդիթ հագնելնիս ,

Շաւակով աղը կրելնիս . շէմշիղամէր ուտելնիս ,

քառսուն ճրագ նստելնիս , ձեռքերնիս հինա դնելնիս ,

ղունտաի մէջ հոդ դնելնիս . քէլլէ իւթմիւշ էնէլնիս .

խէշ թարխանա էփէլնիս . շուխա կապա հագնելնիս :

ԿԸ յԻՀ ԷՔ— Ինչ իմաստով բառեր էին ,

կանտարա , տիտոն , պօրեա , դուպուր , կիճիճ պուլղուր ,
թըղ , վառլընք , կլմատա , խողաքի , ուռուղ , կլլան , թէէն ,
խոն , յենկէրի , չանղ , հարանի , ղաժուտ , կսիս , խաշերկաթ ,
խկէմի , պարքէք , ղուլտուրուկ , պալլընք , էօքոէր , էծուք ,
պիւնկէլ , կոպալա , ըրէչէլ , տիւլ , կոսսօղ , չաթղու , հոռըմ-
պապուկ , բէլիս , տէմիւն , մաստասսեղ , կալխան , կիւկիւմ ,
եօնղա , քէփքէրի , լանչա , կապառա , կակկըպըրիկ , հաշմախ ,
շիբ-շիբ , նալին , քիէթ , տաթտեղ , շառ , հախիս , խէշ , կըս-
կալ , էկիշ , խաշերկաթ , խուր , խոն , առք , կպուկօղ , պա-
ղուկ , օղ , քշտանոց , օրօցք . կապա , թէռլեւկ , քէլիկ , դըղ ,
կակալա , դապարա , կոճիկ , շաղ , ճինճոց , շաքուաց , եաննէխ ,
հըլլէր , կիշլիլիկ , չէլբէշիկ , էվէտի , տըխըղ , խըշիմ կիպի ,
կէնէ , ճօնել , պուտուտեւ , դէօթտէլէկ քարել , թօմպալախ
տառնալ , սըտըռել , պէլլէլ , դընը տնել , բէրթիկել , էօթէն
ինչ է , մամըլ , կէօտէկ եալլն եալլն մնալածը դուք յիշեցէք :

ՊՈՒԶՈՒԽԵՆՅԱՆ ԿԱՊԵՏԸ (Իր Երազ)

(Ընողւամաս)

Գրեց՝ ՆԵՐՍԷՍ ՆԵՐՍԷՍԵԱՆ,

ՏԻԹԵՐՈՅԺ

Անցեալ դիշեր երազիս մէջ բան մը տեսայ ահաւոր,
Ոչ աչքերուս, ոչ ականջիս հաւատացի իրաւ որ,
Բայց եղածը երազ մըն էր, լսկ երազ մը տեսական
Մտիկ ըրէք դուք ուրեմն, հանգիստականք կաք որքան:

Այն տնունները որոնք քիչ մը ոտուրտ-սուրտս պիտ հնչեն
Ջարմանալու բան մը չիկայ, բոլորը ձեզի ծանօթ են,
Մէկէն մինչև քսան տարի չի լսողներ դիտեմ կաք,
Դե՛ ուրեմն ալ սկսիմ, երազս որ յուտ խնդաք:

Տեսարանը տարօրինակ էր մը չէր մը չեմ յիշեր
միայն սա չափս լաւ դիտեմ որ էն քողաքը Ֆէնէսէն էր,
Էն Ֆէնէսէն, որուն կարօտէն քսան տարիէ հալեցայ
Երազիս մէջ գոնէ տեսայ, ու կարօտս քիչ մը առայ:

Իրիկուն մը երբ լոյսերը ամէն տան մէջ մարած էր
Միայն թրխաղը երկնքի պէս կարմիր ջահեր կը վառէր,
Ժողովի մը ձայներ պէս պէս պատերէն դուրս կը թռէր
Ֆէնէսէի խենթ երեւելիներու համախմբեալ հաւաքոյթն էր:

Ներկաներուն անունները դիտնալով համար կը սպասէք
Է, ես մէկիկ մէկիկ թուեմ, դուք մատերովնիդ համրեցէք,
Առաջինը որ կարծեմ ալ, ժողովին նախագահն էր,
Հօռա հաճի կարապետ աղայէն զատ հէջ մէկուն չէր նմաներ
Որուն դէմը շաբաթականը ձեռքը կուրծքը կանգնած էր:

Յետոյ կարգաւ նստած էին նախուղ աղա, Քէլ Սէրգիս
Անուշեւիկը, Կոստոյ նալոյ Մարտիրոսը դրաքիս,
Պատմիր կարապետ, Պրդոտ Խաչիկ, վէ Ումբուշենց Աւետիս:
Թալաթունը, Հաճի Վիլլին, Էրիէն Ակորը միւշլիս,

Ապահով Մանուկ, Եօզը, Ճօճճօն, Ղաաթը հօրան վէ Պուլտուխ,
Երբ էսոնք ամէնը քով քովի կուգան պիղ պէլայը պուլտուխ :
Ֆըս Պետիրոս, Տաւրասն Հաճակոր, Եսնէրի Երրթան և մալխոս,
Վիգաներուն ույէն ասիէն ներքեւ տաք, իւստիւ խառ :

Պարոն Հօռան ինչպէս ըսինք կը նախագահէր ժողովին :
Տէյնէկը վար դրաւ, օտքի ելաւ, պերանը բացաւ . խօսք առաւ
էյ չօրպահիներ, էֆէնտիներ, էս ժողովին նպատակը,
Հաւ հարսնիք մը էնէյ է, ինչպէս կրլլայ նա ըսաւ :

Հէլպէթտէ, Հէլպէթտէ, հաւանութիւն ամէն կողմէ շարժեցին
Բերաններնին մէյ մը բացին մէյ մը գոցեցին հա' բոին,
Բայց խնդիրը ոչ փեսացու ոչ հարսնցու կար մէջտեղ
Կարգուողը ո՞վ պիտի ըլլար անապա, ես զարմացայ հէմ էնտեղ :

Երկար բարակ վիճարանելէ ետք, փեսացուն որ ընտրեցին
Հանրածանօթ Կարապետ էֆ. Պուչուխեան որ սրռեցին,
Եւ հարսնցուն, որուն տնունը լաւ մը չեմ յիշեր ամամ,
Էրկէն Ակորըն պոլլու պօլլու աղջիկն էր Մէմիզար :

Յաջորդ օրը այլախճիներ մէկիկ մէկիկ կանչուեցան,
Ոտքերնին կօշիկ, կլօխնին եաղմտ թագուհիի պէս հագուեցան
Պրուսակենց Օխտան, խն վարդէ, քէօլէ Մաքիտ Տիմանամ,
Ալս Ասուած իմ էս ինչ տէրտ է, ևս էսօր ինչպէս դիմանամ :

Զավուսենց Էլսարէթ, Մարամ, Շըխրէթ. աման տնո՞ւն
մը պակաս

Արդար Մաքիթ, Թորթիկ Մանամ, հաստամարմին Ամրալաշ,
Ծիգ ծիգ Մանամ, կուտուր կլօխ, Թարխանենց Մաքուրը շիշման,
Քէօլէները չէնկէ ծախող պիւլպիւլի պէս Աթմաճան :

Կէս գիշերուան ժամը մէկին Ֆէնէրները վառուեցան
Սիւրիւ սէքէթ քէլը թօփալը մէջտեղ էկան կանգնեցան
Մինչ այլախճիներ առօք-փառօք օրիորդ նեմզարին տունը
դիմեցին

Պարոն Հօռան էլաւ կրնաց տեսնելու մեր Կարապետին :

Փսիսուքը առաւ չորս կողմ, շուտ մը նեմղարին ականջը հասաւ
 Խեղճ օրիորդ ամամհատա օրիորդ տիւղէն տիւղէն հաղւեցաւ
 Մաղերուն ծայրը էքսթրա կապեց շաթղուէ բախրը բարայսվ
 Թաղէ ծագօք ետզման իսխեց, անքուն սպասեց զիշերով:

Նիհայէթը ես շերկարեմ սիւրին էկաւ ներս մտաւ
 Երկու մայրեր դիմաւորեցին այլախնինք մեծահամբաւ
 Ագղըղ տուտուն խօսքը բացաւ, Լեւալաշը լննցուց
 Հէկպէթաէ կըլլայ ինչու չէ ըսին, էդ մենք խորհեցանք
 շատուեց:

Տէրպապային երբ դիմեցին առանկ բան չըլլար ըսաւ,
 Խենթը խենթին հետը տրըրք չի կրնար ընել ըսաւ
 Բայց մեր պորոն Խեղքի Պուտուկը յանկարծակի մէջ մտաւ
 Իր չոր խեղքին պուտուկին ղուրը կամացուկ մը վեր առաւ:

Է, Տէրպապա, էկէրէմէ խենթը խենթին չառնէնէ
 Մեղք ին պէ ճանըմ էնոնք է հէդիին Աժ էսպէս կամեր է
 Մեր կարապետը խելացի մարդ է ինչու չըլլայ պէ ըսաւ
 Օրիորդ Նեմղարն է սիւսլիւ աղջիկ կարապետին յարմար է:

Շուտ կատարուաւ նշանտուքը հարսանիքին կարգն եկաւ
 Պարոն Կարապետ Պուչուխեանը Թագաւորի պէս հագուեցաւ
 Օրիորդ Նեմղարն ալ Թագաւորին քովը իրր Թագուհի կանդ-
 նեցաւ
 Այս բանին ես, ինչպէս և դուք, Աստուած ալ տեսաւ զար-
 մացաւ:

Կերակուրներ կանոնաւոր չէշիտ չէշիտ եփուեցան
 Ուռուպօք տօլազ, սիմա մանթը, ըրէշէլ, զօղաքի և աղցան
 Խաւիզ բեռխընթ, քշտած պաքլա, օսպօք կլլան, ճրվրա,
 Անծերնի մալէզ, ուռուզօք հատապուր պօրանի, բուրշունք
 և շօրվա:

Ողջ քաղաքը ոտքի ելաւ,

Ներկայ էին, չօլուի, չօճուի, շուռ խաղցնող, հարթ վազ-
ցընող, կով արածող, եարարը, եարամազը, կիշիլիկը, տո-
տօկը, կէպիւտը, կամպալը, հօթտօթտին, զմպաւտախ, շրմ-
պաւտախը, հայլաղը, կէօրկիւն, կօկկօզը, ճէնճօտը, ճէնճու-
ղը, խէծէկը և պէծէկը, թօռթիկը և կօռտիկը :

Երբոր կըլլար հարսանիքը կորգը եկաւ չալղըյին,
Աշըի Նազարը, քէօր Օհանը, քէօր Գարբէլը կանչեցին,
Ղըպրտը տէֆ, Ջէթճէնը կռանէթ ուրիշ մը ուս և քէմանի
Ղարման չօրման էս հարսնիքը հէշ մէկ բանի չէր նմանի :

Մեւամաղցոտ այն եղանակը որ յաճախ կը կրկնուէր
Պտրոն կարապետ Պուշուխեանի շ'սիրած երգերէն մէկն էր՝
կարծեմ դուք ալ դուշակեցիք թէ երգուածը ո՞ր մէկն էր՝
« Զի ի տուընջեան և զիշերին, զի մեծ պահքի օրհնենքն էր :

Չորս կողմերէն հեռագիրներ կարկուտի պէս տեղացին
Տէր և Տիկին Պուշուխեաններուն աղւոր աշքը լիւսեցին
եօթը աղջիկ եօթը տղայ ունեաք տէյի օրհնեցին
Եւ շատերն ալ մէկ պարձի վրայ ծերանաք բսին,
Օրը մթնեց իրկուն եղաւ բազմութիւնը ցրուեցին
Եւ նորապառանները տէվէլ տաղըն « ընիմուսին » զնացին :

ՄՕՐՍ ՆԱՄԱԿԸ

Գրեց՝ ՆԵՐՍԷՍ ՆԵՐՍԷՍԵԱՆ

Տօւտուիդ մէն մախսուս պարեւ կէնէմ սէվկիւլիւ էշ
կիս լուսը մէկհատիկ իս :

Էսօրմէն իրէք շարաթ էսէջ ղրկած հինգ ոսկիդ աորեք,
հաճի Մկրտիչ աղէն էվրէլ տուընք, թամ վտրըտըն հաստաւ
եւվրոււմ, մեր պակսեցուցածը Ասված էվէլցուսէ, քէսէյիթ
հայր Արբահամըն պէրէքէթը տայ, հող ճառգէս օսկի կըտը-
րի, քու սայէյօթ պաշխառըյին մէօհթաճ չի գտնկ ընանք,
էս տարվան մըսացուսին էփէյի պօլկէկ էղաւ, 25 տէպրէկ
չօրմիս իլէն տասնըվինը պուղոււմ իշկիկ իլէլցուցընք. տասը
լէնկէրիյէ սուղղուլթ էղաւ :

Ծուռլուկեանց Խաչատուր աղբն պիտիկ հէստպ մը ունէրինք թէմիզլէմիշ էրինք, իշտէ ինտէս եամբոււմ, վէրէսի պան առնուանէ էվէլ էվէլօք կակիրէն տէֆթէրը, մեղայ էս սապօնի բարոյէ, էս կազ եաղբըյի բարայէ տէր իքէն իրէք մէճիտիյէ պարտքերնիս ելաւ :

Տուճուկիս պիտիկ թամիր մը կուզէր, անցած նօրը չօրս պէռ զոււմ թափել տուընք կուտուրը, չէնէ անծիրն էկած վախըտը լօղելէն կլօխ չիքէր կանէր էլլէրինք, էկածը Ծընըդ է եամբոււմ, իստիյանենց առաքել աղբն կուացընք, ծըմըռվան օտան իլէն տիվանէնէն սուվա էնէլ տուընք, սէլէ մը օտուն իլէն էրկու պէէռ է արտուճ ուննանք նէ ծրմեռնիս կը հանէ : շինդ պէռ էրթ առընք, էրթնէ զրթ կուղայա քիշ մը զաղէլ չարքէցիւմ պըտը խառնեմ պուտուտամ հայվաննեքուն ինչ էնէս, իտարէի մտալահաթ կակէնէնք :

Պուռլուկներուն վըզը ծուռ չօշի մնայ տէյի պէտք էղածը կակէնէմ, այլէնց կարուպետ աղբնմէն թօի մը կապօտ իլէն պիտիկ մը զոււմալ առընք ներքէնէն վիրէվէն ուռուպա կարվանք, քիւրէրիդ պուշխասըյին եէրինմիշ բնալու սէվէպ մը չուկին : Սաղ ընաս եամբոււմ Ասված պիլէկիդ զուվէթը էվէլցունէ : Մեզի համա մէրաք չէնէս էծուքին զարգավաթը կա կօքտէ պազը տրացըններունէ պիլէ հէսա մը կակեելնայ էքիւնիս էս տարի մէնսիլ շի տուվընք, կըտըրած խաղողէն ուռուպնիսէ էիէցինք (քէզիսուզ հէրամ), անուլ պէրնօք ուտել զըսմէթ էնէ, սրայի կապէքլէնք, բրալսլէիւր իփիփիլլիյին, էվէլցած շիվէն հա պիտիկ մը բրախը հանենք կաք սենք, տունիդ միւսաֆիր մը կուգայ, պէտքը կընա տէյի : Տահա ինչ կիտէմ եամբոււմ տուն քեզի աղօր հոգ տանէս, տաքէն պաղէն սախընմըլ ընաս բարայիդ զըյմէթը կիտանաս, վաստըկէլը զօռ է, Ասված տաղ սէլամէթ զաւուշմըլ ընալ զսմէթ էնէ, պապուդ տեղը պունէրիսըք էսէ հէյէր ուրախէրիմ, տուռ տրացըն, եէրէններիդ թիւմուննէ խուսուսի պարն կէնէն, սիւադ թէզ լմնցուրըք էկու, զատասընալտըղըմ եամբոււմ էչկիս համբան մնացած է :

Մէրիդ.....

ՁՈՆ ՀԱՅՐԵՆԻ ՆԱՀԱՏԱԿԱՑ

1. — Բարեա՛ւ ննջէք,

Ո՛ր Նալբենեացո նահատակներ,

Արդեղոսեան մթնոլորտով

Սնած, մեծցած վերադրողներ

Կողեկուն խո՛ր յարդանքով

Օրհնեա՛լ բլլայ,

Սուրբ Եղատակ Նահատակաց:

2. — Եաւէ՛տ կեցցէք,

Ո՛ր Նալբենեացո բիւ՛ր անմահներ,

Կախողանի՛ր, Լաթաղանի,

Բերա Եղունի, զժրաղղ զոհեր,

Նոխաղ՝ Աղատն Հայաստանի,

Օրհնեա՛լ բլլայ՝

Սուրբ յիշատակն Ձեր խնկելի:

3. — Բարեա՛ւ ննջէք

Ո՛ր պաշտելի անձնուէրներ,

Հոռւբիւնեանի, Հմեարդեանի

Անխոնջ խանդոտ հիմաղիրներ,

Որ քուն քաշէք յաւիտենի.

Օրհնեա՛լ բլլայ՝

Յուշարձանն Ձեր անմոռաց:

4. — Եաւէ՛տ կեցցէք,

Ո՛ր կրթական վեթեառներ,

Եւ աշկերաներ նրանց մտքի,

Որք տանջուեցան խօլ գիր՝ի վեր—

Վայրաղ ջարդովն դաժան թուրքին.

Օրհնեա՛լ բլլայ

Ձոհարերումն Ձեր մորմոքի:

5. — Վոտա՛հ Եղէք,

Ո՛ր հանդուցեալ պաշտելիներ,

Եանուն պատույ՝ բրած ուխտի,

Ապրող՝ յիշող Ձեր յաջորդներ՝

Պիտի շինեն, տուն հայրենի

Եւ հոն յաւէ՛տ

Պիտ՝ պանծացնեն Ձեր յիշատակ:

Արիկ Գալֆեան

Տիթրոյթ, Միշ.

ՖԷՆԷՍԷՅԻՆԵՐՈՒ ՈՒՇԼԵՐՈՒԹԵԼՆ

Յարգելի Հայրենակիցներ .

1934 Մեպտ . 3-ի թուականը պատմական օր մը նկատուեցաւ բոլոր Ֆէնէսէցիներուն համար . այն պատճառաւ , որ Տիթրոյթի մէջ գումարուած Պատգամաւորական ժողովը , վճռականօրէն լուծեց Մայր Երկրին մէջ ՖէնէՍԷ անունը յաւերժացնելու դադարարը գործնականի վերածելու հարցը , և այդ սղղութեամբ նորակառոյց ՆՈՐ ԿԵՍԱՐԻՈՅ մէջ թաղամաս մը հիմնելու խնդիրը անմիջական գործադրութեան դրնելու համար լիազօր և պատասխանատու Յանձնախումբ մը ընտրեց , որ Միութեան Կեդրոնական Վարչութեան հետ համախորհուրդ յարաբերութեան մէջ էր Կեսարիոյ վերաշինաց Միութեան Գործադիր Մարմին հետ , և որոնց հետ կոյսացած վերջին Համաձագրի պատճէնը թեթեւ սրբագրութեամբ մը «Թուրիսեան»ի մասնաճիւղերու վաւերացման ենթարկուեցաւ :

Մեր պատուարժան Հայրենակիցներու մեծամասնութեան փափաքը եղող այս նուիրական գործը յաջողութեամբ պսակելու համար , անհրաժեշտ է առանց անձնական նկատումներու սրտանց աշխատիլ ոյժ տալու համար մեր գործօն անդամներուն :

Անտարբեր մնալով ոչ միայն կը կաղայ այսպիսի կենսական գործի մը յաջողութիւնը այլ նաեւ կը վնասէ Հայրենակցական մեր բոլոր շահերուն : Այսպիսով դեռ վերջացած չենք նկատեր մեր գործունէութիւնը կայ աւելի կենսականը՝ այն է «վառ պահել Ֆէնէսէցիի Հայրենասիրական զգացումները Հայրենակիցներուն մէջ :

37631-6A

Յաճախ շփման մէջ ըլլալով մուսցութեան դատապարտուելու վախէն դերժ կը մնանք: Հաւաքոյթներ, խնճոք կամ Դաշտահանդէսներ՝ օրինակելի միջոցներ են հաւաքականացածք պահելու համար մեր հայրենակիցները:

Այսու ամենայնիւ կոչ կ'ուղղենք Ամերիկայի մէջ եւ աշխարհ տնտեսող մեր բոլոր Ֆինէսէցի հայրենակիցներուն, յանուն մեր սիրեցեալ Ռուսիոյ հանդիսակցներուն, յանուն մեր նահապետական ազնիւ բարքերու ու սովորութեանց, լիզուի ու համերաշխ գործակցութեան, և յանուն մեր հայրենակից նահատակներու յիշատակին: որ չի լքէք այսքան երկա՛ր տարիներու Զեր գուգարացած պաշտելի միութիւնը: Եւ այն ատեն թերեւ միջոց կ'ունենանք փոթորիկներէն ցիր ու ցան եղած մեր հայրենակիցները ի մի հաւաքելու Մայր Երկրին մէջ, և կառուցանելով հո՛ն դարձեալ ՌՈՒԲԻՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ, որ որպէս Յուշարձան մը՝ կենդանի պիտի մնայ մեր հին ու պատմական Ֆինէսի յիշատակը յաւերժացնող:

Ն. Ն.



Սոյն գրքոյկը և հետզհետէ նաջորդելիքները՝ անկողնոյ
յին հիւստարակուելիք յիշատակարանի մը հիմնաքարը պիտի
կանգնեն։ Կան նաև պատրաստի գրութեանք որոնք հետզհետեւ
այիտի յանձնուին մամուլին, կը խնդրուի, Ռուսիոյնան վար-
ժարանի բոլոր աշակերտներէն և ռուսացիներէն, որ բարե-
հաճին հաղորդակից մնալ հրատարակչի և տնօր աշխատակից-
ներուն հետ, և գրութիւններ զրկեն եթէ կը փախաքին, ոչ
միայն կատակաբանական, այլ ծանօթութիւններ, տեղեկու-
թիւններ, անէքթօտներ, նկարներ և այլն որոնք կրնան ֆէնէ-
սէի փառքը աւելցնել, և մեր ապագայ յիշատակարանի դար-
ձնել հոն հաւաքածոյ մը։

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ



ԳԻՆ 25 ՄԵՆՔ

ՇԻՆԱՐԱՐ ՏՊԱՐԱՆ - SHINARAR PRESS

317-319 W. LARNED ST. Detroit, Mich. Թէլ. CHerry 0273

Կը ստանձնենք ամէն տեսակ Հայերէն և Անգլ. տպագր. գրքեր, և կը հայթայթենք խիթրոյթահայութեան հասցէ-
ները։ Սեփականիցսէր-Վարիչ ԱՔԻԿ ԳԱԼՅԱՆԱՆ

2014

14@19

